ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941 – 1945 թթ.). *Երևան, «Զանգակ – 97 հրատ.», 2002, 242 էջ, 146 լուսանկար:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ պաշտպանության նախարարության հովանավորությամբ հրատարակած այս մենագրության մեջ պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը հիմնականում նորահայտ, արժեքավոր արխիվային փաստաթղթերի, ինչպես նաև մամուլի ու գրական աղբյուրների հիման վրա նորովի լուսաբանել է 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը: Չնայած վերջինս մշտապես գտնվել է ինչպես խորհրդային Հայաստանի, այնպես էլ Հայաստանի երրորդ հանրապետության պատմագրության ուշադրության կենտրոնում ու տարիների ընթացքում զգալի գործ է կատարվել այդ կարևոր ե արդիական նշանակություն ունեցող թեմայի լուսաբանման ուղղությամբ, այնուամենայնիվ դրախոսվող աշխատությունը գիտական լուրջ ներդրում է հայագիտության տվյալ բնագավառում և հայ պատմաբանների նախկինում կատարած շնորհակալ աշխատանքի օրգանական շարունակությունն է լրացնելով պատմագրության այդ ասպարեզում եղած «սպիտակ» էջերը: Մենագրության կարևորագույն արժանիքներից մեկն այն է, որ դերազանցապես շարադրված է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ) հարուստ նյութերի հիման վրա, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Գրքում օգտագործված են նաև ՌԴ ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվի (Լենինգրադի մարզ, ք. Գատչինա), Ռուսաստանի սոցիալ-քաղաքական հետազոտությունների պետական արխիվի (ք. Մոսկվա), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության և հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվների համապատասխան ֆոնդերի նյութերը: Հեղինակը լայնորեն օգտագործել է նաև ռազմաճակատային, միութենական և հանրապետական մամուլի նյութերը, վերջին տարիներին Մոսկվայում լույս տեսած մասնագիտական գրականությունը: Օգտագործած բոլոր սկզբնաղբյուրների և գրականության նկատմամբ հեղինակը ցուցաբերել է քննական մոտեցում:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից, վերջաբանից և ընդարձակ հավելվածից: Ներածության մեջ համառոտակի, նոր նյութերի հիման վրա հեղինակը ընդհանուր գծերով բնութագրել է Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Եվրոպայում և Ասիայում տիրող խիստ լարված միջազգային դրությունը, ներկայացրել, թե ինչպես էր 1939 թ. սեպտեմբերի 1-ին բռնկված Երկրորդ համաշխարհային պատերազմի բոցն աստիճանաբար մոտենում ԽՍՀՄ սահմաններին և թե ինչ քայլերի էր դիմել խորհրդային կառավարությունն իր արևմտյան և հյուսիսային սահմանների անվտանգությունն ու երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, հեղինակը նշել է, որ պատերազմի նախօրյակը ծանր փորձություններ էր Կարմիր բանակի համար: Միայն 1937–1940 թթ. ստալինյան անհիմն բռնաճնշումների զոհ դարձան և գնդակահարվեցին ավելի քան 40000 զինվորական, որոնց թվում ԽՍՀՄ առաջին 5 մարշալներից 3-ը (Մ. Ի. Տուխաչևսկի, Վ. Կ. Բլյուխեր, Ա. Ի. Եգորով), 5 առաջին կարգի բանակային հրամանատարներից (հավասարազոր է բանակի գեներալի) 4-ը (Ի. Է. Յակիր, Ի. Պ. Ուբորևիչ, Ի. Ֆ. Ֆեդկո, Ի. Պ. Բելով), միակ առաջին կարգի

բանակային կոմիսարը (հավասարազոր է բանակի գեներալի. Յա. Բ. Գամառնիկ), 2 առաջին կարգի նավատորմի ֆլագմանները (հավասարազոր է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի. Ս. Վ. Վիկտորով, Վ. Մ. Օլով), Գ-ը՝ երկրորդ կարգի բանակային հրամանատարները (հավասարազոր է գեներալ-գնդապետի), 57 կոմկորներից (հավասարազոր է գեներալ-լեյտենանտի) 50-ը (որոնց թվում՝ Գ.Դ.Գայը, Գ. Դ. Խախանյանը. Գ. Կ. Ոսկանյանը, Ա. Պ. Շահնազարովը և ուրիշներ), 15 երկրորդ կարգի բանակային կոմիսարները (հավասարազոր է գեներալ-գնդապետի. որոնց թվում՝ Հ. Ա. Հովսեփյանը, Օ. Ա. Սահակյանը և ուրիշներ), 28 կորպուսային կոմիսարներից (հավասարազոր է գեներալ-լեյտենանտի) 25-ը, 186 կոմդիվներից (հավասարազոր է գեներալ-մայորի) 154-ը (այդ թվում՝ Հ. Թ. Աթոյանը), 64 դիվիզիայի կոմիսարներից (հավասարազոր է գեներալ-մայորի) 48-ը (որոնց թվում՝ Գ. Ս. Սաֆրազբեկյանը, Ի. Ա. Վարդանովը, Խ. Հ. Աբրահամյանը և ուրիշներ), 656 գնդապետներից 401-ը և այլն: Այս արժեքավոր թվական տվյալներն ամբողջությամբ հայ պատմագրության մեջ հրապարակվում են առաջին անգամ: Ներածական բաժնում հեղինակը հետաքրքիր փաստեր է բերել նաև ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու մասին խորհրդային հետախույզների հաղորդագրությունների վերաբերյալ, որոնք Ստալինը համարել է սադրիչ ապատեղեկատվություններ:

Առաջին գլուխը, որը կրում է «Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում» վերնագիրը, բաղկացած է չորս ենթաբաժիններից: Առաջին ենթաբաժնում լուսաբանվել են պատերազմի սկզբին և առաջին մարտերին վերաբերող հարցեր, վեր հանվել այդ ծանր օրերին հայ ռազմիկների կատարած սխրանքները, բացահայտվել նոր անուններ, որոնք մինչև վերջերս անհայտ էին հայ պատմագրության համար: Նրանց թվում էր 6-րդ հեծյալ դիվիզիայի 94-րդ հեծյալ գնդի հրամանատար, փոխգնդապետ Նիկոլայ Պետրոսյանցը (Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Սարգարայեն գյուղից), որը, 1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան անհավասար մարտի մեջ մտնելով հակառակորդի թվով ու տեխնիկայով մի քանի անգամ գերակշռող ուժերի դեմ, մինչև երեկո կարողացավ հետ մղել թշնամու անընդմեջ գրոհները և հնարավորություն տալ դիվիզիայի հիմնական ուժերին կանոնավոր ետ քաշվել պաշտպանական նոր բնագիծ: Օրվա վերջին, թշնամու տանկային գրոհը հետ մղելիս, խիզախ արցախցին զոհվեց քաջի մահով՝ մինչև վերջ հավատարիմ մնալով զինվորական երդմանը: Բաժնում նորահայտ փաստեր են բերվել հունիսի 22-ին թշնամու «Յունկերս-88» ինքնաթիռ խփած զենիթային հրետանավոր, եֆրեյտոր Ավետիս Աղայանի (Հյուսիսային Արցախի Խանլարի շրջանի Զաղլիկ գյուղից) և հրանոթի նշանառու Մուշեղ Բալայանի մասին, որը հուլիսի 17-ին անձամբ ոչնչացրեց գերմանական 12 տանկ. դա պատերազմի առաջին շրջանի պատմության մեջ աննախադեպ երևույթ էր, որն առ այսօր չի լուսաբանվել պատմագրության կողմից: Առաջին անգամ են հրապարակվում նաև զրահագնացքի հրետանավոր Լևոն Գրիգորյանի (Սևանի շրջանի Գեղամավան գյուղից), հրետանային դասակի հրամանատար Բաբկեն Մանուկյանի (Աշոցքի շրջանի Աշոցք գյուղից), գնդացրորդ Խաչատուր Բեկնազարյանի (Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանից) անունները, ովքեր պատերազմի առաջին օրերին կատարած սխրանքների համար արժանացան Լենինի շքանշանի:

Երկրորդ բաժնում նորահայտ փաստերի հիման վրա ճշտվել է Խորհրդային Հայաստանից և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից բանակ զորակոչված հայերի թիվը, որը կազմել է ավելի քան 500000, որից՝ 300000-ը Հայաստանից: Երրորդ բաժնում լուսաբանվել է ազգային և ոչ ազգային դիվիզիաների կազմավորման հիմնահարցը, ճշտվել, որ պատերազմի տարիներին գոյություն են ունեցել հայկական 6 դիվիզիաներ՝ 76-րդ, 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ: Դրանցից բացի Հայաստանի տարածքում կազմավորվել կամ համալրվել են 61-րդ, 136-րդ, 138-րդ, 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ ոչ ազգային դիվիզիաները: Չորրորդ բաժնում հետազոտ-

վել է հանրապետության ժողովրդական տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցման հիմնահարցը:

Երկրորդ գլխում, որը կրում է «Պատերազմի առաջին և երկրորդ շրջանների գլխավոր ճակատամարտերում» վերնագիրը, հիմնականում նորահայտ արխիվային փաստերի հիման վրա հեղինակը լուսաբանել է Մոսկվայի, Ստալինգրադի, Կովկասի, Կուրսկի ճակատամարտերին, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Կարելիայի և Անդրբևեռների ազատագրման գործողություններին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցերը: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Կարելիայի և Անդրբևեռների ազատագրմանը հայերի մասնակցության հիմնահարցը հայ պատմագրության մեջ լուսաբանվում է առաջին անգամ:

Երրորդ «Ֆաշիստական լծից Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներն ազատագրողների շարքերում» գլխում հայ պատմագրության մեջ առաջին անգամ համակարգված ձևով լուսաբանվել է Լեհաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Ավստրիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցը, մեկ առ մեկ վեր հանվել այդ մարտերում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած կամ Փառքի շքանշանի լրիվ ասպետ դարձած հայորդիների անունները:

Չորրորդ «Ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի ջախջախման մարտերում» գլխում, հեղինակը լուսաբանել է Արևելյան Պրուսիայի և Բեռլինի ճակատամարտերին ճապոնական միլիոնանոց Կվանտունյան բանակի ջախջախման, հյուսիսարևելյան Չինաստանի և Հարավային Սախալինի ազատագրման գործողություններին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցերը՝ շրջանառության մեջ դրել կարևոր փաստեր և նոր անուններ: Գլխի վերջում տրվել են ֆաշիզմի դեմ իրենց ծանրակշիռ ավանդը ներդրած խորհրդային արտաքին հետախուզության ականավոր ներկայացուցիչներ՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովակիմյանի, գեներալ-մայորներ՝ Իվան Ադայանցի, Միքայել Ալավերդովի, Վյաչեսլավ Կևորկովի, գնդապետներ՝ Աշոտ Հակոբյանի, Գերասիմ Բալասանովի, Խորհրդային Միության հերոս, գնդապետ Գևորգ Վարդանյանի, նրա կնոջ ու գործընկերուհի՝ Գոհար Վարդանյանի անունները, որոնց կատարած լեգենդար սխրանքները, հայտնի պատճառներով, դեռևս չեն լուսաբանվել հայ պատմագրության կողմից:

Հինգերորդ գլուխը, որը կրում է «Պարտիզանական և դիմադրական շարժման շարքերում: Ափյուռքահայերի ավանդը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում» վերնագիրը, բաղկացած է երեք ենթաբաժիններից: Առաջին ենթաբաժնում ցույց է տրված, որ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդն են ներդրել նաև հայ պարտիզանները. միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում 200, Ֆրանսիայում 1200, Հունաստանում ավելի քան 1000, Հոլանդիայում շուրջ 800 հայ պարտիզաններ և այլն: Երկրորդ ենթաբաժնում նորահայտ փաստերի հիման վրա ցույց է տրված ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում սփյուռքահայերի ներդրած ավանդը: Սփյուռքահայերը ոչ միայն բարոյական, այլև նյութական զգալի օգնություն ցույց տվեցին մայր հայրենիքին ու Կարմիր բանակին: Նրանց հանգանակած գումարների հաշվին կառուցվեցին «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները: Հազարավոր սփյուռքահայեր զենքը ձեռքներին մարտնչել են դաշնակից երկրների շարքերում: Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20000 հայորդիներ: Ամերիկահայ հանրահայտ օդաչուներ՝ Չարլզ Տերտերյանի, Սեմ Պարսամյանի, Էնդրյու Կոչտոյանի և այլոց թվում առաջին անգամ նշվել է նաև Քըրք Քըրքորյանի անունը, որն իր ինքնաթիռով խաղաղօվկիանոսյան մարտական գործողությունների թատերաբեմում կատարել է 37 թռիչք և արժանացել ԱՄՆ-ի կառավարության պարգևի: Նոր

վաստեր են բերվել նաև աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի, նրա ծնողների ու քրոջ հակաֆաշիստական գործունեության վերաբերյալ և այլն: Երրորդ ենթաբաժնում փորձ է արվել նորահայտ արխիվային նյութերի հիման վրա, առանց գաղափարական որևէ կաղապարի, ընդհանուր գծերով տալ պատերազմի տարիներին գերմանական բանակի կազմում գոյություն ունեցող Հայկական լեգեոնի համառոտ պատմությունը և դրա օբյեկտիվ գնահատականը: Մեր կարծիքով, հեղինակը եկել է այն ճիշտ եզրակացության, որ Հայկական լեգեոնի դուրմարտակները (թվով 10, որոնց շարքերում ընդամենը եղել է 8–9 հազար մարդ) ոչ միայն չծառայեցին գերմանացիների շահերին, այլև հիմնականում համալրեցին խորհրդային պարտիզանների, ֆրանսիական, հոլանդական, հունական հակաֆաշիստական դիմադրական շարժման շարքերը:

Վեցերորդ գլխում լուսաբանվել է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքը, որի շնորհիվ հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, Կարմիր բանակի մարտական զինանոցի. այստեղից «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն: Պատերազմի տարիներին Հայաստանում շահագործման հանձնվեցին 30 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, յուրացվեց 300 արտադրատեսակների արտադրությունը, այդ թվում նաև ինքնաթիռաշինությունը: Սկզբնական շրջանում Երևանի թիվ 447 գործարանը վերանորոգում էր մարտերում վնասված կործանիչ-ինքնաթիռները, այնուհետև սկսեց արտադրել «Յակ-3» կործանիչի թևեր ու շասսի, ապա՝ ուսումնավարժական «ՈՒՏ-2Մ» ինքնաթիռ: Գլխում բացահայտվել է նաև կոլտնտեսային գյուղացիության հերոսական աշխատանքը, որի շնորհիվ ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան դրանք, ինչը հնարավորություն տվեց հանրապետությունն ապահովել սեփական հացով: Գլխում հատուկ տեղ է հատկացված պատերազմում տարած հաղթանակի գործում հայ մտավորականության ներդրած արժանի ավանդին, նրանց աշխատանքի լուսաբանմանը:

Վերջաբանում բերված ամփոփիչ թվական տվյալները ցույց են տալիս, որ պատերազմին ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 600000 հայ, որոնցից ավելի քան 200000-ը զոհվել են մարտերում. պատերազմի մասնակիցներից 300000-ը ռազմաճակատ են մեկնել Խորհրդային Հայաստանից, 200000-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, իսկ շուրջ 100000-ը՝ արտասահմանյան երկրներից: Առաջին անգամ հայ պատմագրության մեջ թվական տվյալներ են բերվել 1945 թ. հունիսի 24-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած հաղթանակի զորահանդեսին մասնակցած հայերի մասին:

Մեր կարծիքով պատմագիտական կարևոր արժեք է ներկայացնում մենագրության 130 – 240-րդ էջերում տպված ընդարձակ հավելվածը, որտեղ համառոտ, բայց սպառիչ տեղեկություններ են տրված Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած հայ և հայաստանցի այլազգի քաջորդիների (ցուցակ 1), Փառքի շքանշանի լրիվ ասպետ հայ զինվորների (ցուցակ 2), հայ մարշալների, գեներալների ու ծովակալների (ցուցակ 3) մասին, տպագրված 119 հերոսների ու Փառքի շքանշանի 27 ասպետների լուսանկարները: Հերոսների ցուցակում առաջին անգամ տեղ են գտել նաև դատվելու պատճառով հերոսի կոչումից զրկված 4 հոդու անուններ: Ըստ հեղինակի բերած տվյալների, ընդհանուր առմամբ Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 108 հայեր և 11 հայաստանցի այլազգիներ: Նրանցից 4-ը այդ բարձր կոչմանն են արժանացել 1939–1940 թթ. Խորհրդա-ֆիննական, 101-ը՝ 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմների, 3-ը՝ հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար: Ջափազանց արժեքավոր է հատկապես հավելվածի

երրորդ ցուցակը, որից պարզվում է, որ պատերազմի մասնակից հայորդիներից 4-ին շնորհվել է մարշալի, 8-ին՝ ծովակալի, 8-ին՝ գեներալ-գնդապետի, 29-ին՝ գեներալ-լեյտենանտի և 97-ին՝ գեներալ-մայորի զինվորական կոչում: Նրանցից 64-ը զորավարական այդ բարձր կոչման են արժանացել պատերազմի, իսկ 83-ը՝ հետպատերազմական տարիներին:

Աշխատությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, ձևավորված է պոլիգրաֆիական բարձր մակարդակով ու ճաշակով: Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը: Անշուշտ, դրա երևան գալը՝ Նկատելի առաջընթաց է Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի գիտական լուսաբանման ասպարեզում: Մնում է ցանկալ, որ այս մնայուն և ճանաչողական մեծ նշանակություն ունեցող մենագրությունն անպայման թարգմանվի ռուսերեն կամ այլ օտար լեզուներով, որպեսզի արտասահմանյան ընթերցողը ևս հստակ պատկերացում կազմի ֆաշիզմի ջախջախման գործում հայ ժողովրդի ներդրած ծանրակշիռ ավանդի վերաբերյալ:

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ